

**ARMENIAN AMERICAN CHAMBER OF COMMERCE-ի
11րդ Տարեկան Ձեռնարկ եւ Պարգեւատրումներ**

Armenian American Chamber of Commerce-ի (Ամերիկահայ Առեւտրականներու Միութեան) Լոս Անճելըսի մասնաճիւղի 11րդ Տարեկան ճաշկերոյթ-Պարահանդէսը եւ Մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Մարտ 20ի երեկոյեան Կլէնտէյլի Դիլթըն Պանդոկին մէջ: Յիշեալ Միութեան Նախագահն է Տիար Զաւէն Գազազեան:

Հանդիսութեան ընթացքին երեք Ամերիկահայեր յատուկ պատուի արժանացան.-

Business of the Year ARTN/Shant – Armenian Russian Television Network, Robert Oglakhchyan, C.E.O. President.

Businesswoman of the Year, Lara Yeretzian, Esq., Yeretsian Law, APC.

Businessman of the Year, Garo Kassabian, MD, FACS, Lift MD Aesthetics.

Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան ներկայ գնտուեցաւ սոյն ձեռնարկին եւ Սրբազան Հօր շնորհաւորութիւնները փոխանցեց պատուի արժանացած հայորդիներուն եւ գնահատութիւնը՝ Ամերիկահայ Առեւտրականներու Միութեան Նախագահ՝ Տիար Զաւէն Գազազեանին: